

## «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

### Մաթեմատիկան բանավոր

1-3-րդ դասարան

#### **Ուսուցման նպատակները**

Դասընթացի հիմնական նպատակն է իրական աշխարհի երևույթները մաթեմատիկորեն հետազոտելու ունակության դաստիարակումը, հնարավորություն տալու երեխաներին բացահայտելու իրենց, զարգացնել սովորողների ստեղծագործական ընդունակությունները, տրամաբանական մտածողությունը, խորացնել գիտելիքները, որոնք նրանք ստացել են դասերի ժամանակ, սովորեցնել ստեղծագործաբար մոտենալ յուրաքանչյուր խնդրի լուծմանը, կարողանալ տրամաբանական դատողություններ կատարել, ինքնուրույն մտածել, առանձնացնել խնդիրների էական հատկանիշները, վերլուծել, ընդհանրացնել, սովորեն հարցեր տալ:

#### **Դասընթացի խնդիրներն են.**

- սովորողների մոտ զարգացնել կայուն հետաքրքրություն դեպի մաթեմատիկան
- զարգացնել սովորողների մաթեմատիկական ընդունակությունները և հետազոտական կարողությունները
- դաստիարակել սովորողների մոտ խմբային աշխատանքի զգացողություն և համատեղել
- անհատական աշխատանքը խմբի հետ
- զարգացնել սովորողների ուշադրությունը, դիտողականությունը, հիշողությունը, աշխատասիրությունը, հանդուրժողականությունը, նպատակապացությունը, համբերությունը
- զարգացնել սովորողների ուշադրությունը, դիտողականությունը, հիշողությունը, աշխատասիրությունը, հանդուրժողականությունը, նպատակապացությունը, համբերությունը
- սովորողների մոտ զարգացնել կոնկրետ իրավիճակներում արագ կողմնորոշվելու կարողություն
- ուսումնասիրությունների ընթացքում համակարգչային ծրագրեր օգտագործելու կարողություն
- ինտերնետից անհրաժեշտ ինֆորմացիա գտնելու մշա կելու, ներկայացնելու կարողություն

#### **Թեմատիկ պլանավորում**

#### **Ծրագիր 2-րդ և 3-րդ դասարանների համար**

- 1.Թվեր և գործողություններ դրանց հետ: Ուրախ հաշիվ
- 2.Գտնել օրինաչափությունները
- 3.Հեքիաթային բովանդակությամբ հետաքրքրաշարժ խնդիրներ

- 4.Խաղեր թվերով և առարկաներով
  - 5..Սովորում ենք կռահել ռեբուսներ
  - 6.Մոզական քառակուսիներ
  - 7.Առաջադրանքներ լուցկիներով
  - 8.Երկրաչափական առաջադրանքներ
  - 9.Հետաքրքրաշարժ խնդիրներ.
- Բանաստեղծությունների տեսքով հետաքրքրաշարժ խնդիրների լուծում
- 10.Տրամաբանական խնդիրների լուծում
  - 11.Առաջադրանքներ կշռման վերաբերյալ
  - 12.Խնդիրներ շարժման վերաբերյալ
  - 13.Հետադարձ լուծմամբ խնդիրներ
  - 14.<< Կենդուրու>> -ի խնդիրների լուծում